

ՓԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ
ՉԷ ԱՐԱՖԱԹԻ ԱՌԱՋԱՐԿՈՎ
ՈՒՆԵՆԿՈՒՆ, 15 (ՈՒՇՈՐԸ).- Հեպտոնր
անհրկեան ուժերու հսկողութեան տակ դնե-
լու Եսաէր Արաքսիի առաջարկը Ռուշիկ-
քընի մէջ օրակարգի նիւթ չէ, յայտարարեց
Միացեալ Նահանգներու պաշտպանութեան
նախարար Ռիչիլըմ Փէրի, նկատել տալով, որ
ատիկա պաղեստինցիներ - Իսրայէլ բանակէ-
ն յիշուած միջոցը չէ:
Փէրի, որ կը խօսէր Իսրայէլի պաշտպա-
նութեան նախարար Իցհաք Մորտէսիայի հետ
տեսակցութեան մը ետք, ըսաւ, որ նման առա-
ջարկ նախապէս ալ ներկայացուած էր, բայց
նկատի չէր առնուած:

ԱԶՏԱԳ
AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
ازتاک جريدة يومية سياسية وأدبية - الميرة السؤلة، إيشادرويشيان
1000 L.Ռ. 7194 SURT, ԹԻՒ 187 (19487) ՀՈՐԵՔՇԱՔԹԻ, 16 ՀՈՒՍԵՏԵՐ 1996 10 ԷՁ

Facilités Incroyables
Prix Imbattables
tapiorama
THE LARGEST CARPET CENTER
Credit sur 10 mois sans intérêt
à partir de 30\$ par mois
Tapis: Persan - Chinois - Européen - Moquettes - Papiers peints
Ouvert les Dimanches demi journée

**ՓՈԽԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻՆ՝
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ
«ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ»**

Լիբանան այսօր կը թեւակոխէ օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններու համար իրողա-
կան փոխանցման փուլ մը, որ պիտի յատկանշու-
ի միջապահին մէկէ աւելի ուշագրաւ «միջամ-
տութիւններով»:
Արդարեւ, 1992ին ընտրուած խորհրդարանին
պաշտօնավարութիւնը վերջ գտաւ երէկ կես գի-
շերին եւ այսօր կը սկսի պաշտօնավարութիւնը
նորընտիր խորհրդարանին, որուն նստաշրջա-
նը պիտի բացուի շաբաթ մը ետք: Վարչապետ
Հարիրիի կառավարութիւնը ըստ օրինի երա-
ժարեալ է եւ մինչեւ նոր կառավարութեան կապ-
մութիւնը, պիտի մնայ ընթացիկ գործեր վարողի
հանգամանքով:
Միջապահին «միջամտութիւնները» կը ներ-
կայանան Քիւնթըն - Հարիրիի հանդիպումով եւ
Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի Պէյրութ մօ-
տալուտ այցելութեամբ: Արդարեւ, Հարիրի եւ
Ելեւնուտընի նախարար Ֆուատ Միւնիդար երէկ
Ռաշիւկթըն մեկնեցան, Լիբանանի միջապա-
հին օժանդակութեանց խոստումը հետապնդե-
լու համար: Իսկ Շիրաք Պէյրութ պիտի այցելէ 24
Հոկտեմբերին, երբ նախագահ Հըրաուի լծումը
պիտի ըլլայ նոր կառավարութեան կապմութիւնը
կանխող խորհրդարանական պարտադիր
խորհրդակցութիւններով: Այս ընթացքով, կ'ըսեն
լաւատեղեակ աղբիւրներ, նոր կառավարու-
թեան ծնունդը հաւանական չէ Հոկտեմբերի
աւարտէն առաջ:

**ԱԿՆԱՐԿ
ՃԱՏԱԶԱՐԵԱՆԻ
ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՆԱԵՒ
ՔՈՂԱՐԿԱԼԻՔ ԲԱՆ ՈՒՆԻ**

Երբ Հալաստանի «ուժային կառոյցներ»ուն դեմ
քննադատական յայտարարութեամբ իրաւարակ
կու գալ Աշոտ Մանուչարեան, որ անցեալին եղած
է ուժային աղբիւր կառոյցներէ մէկուն ղեկավարը,
մարդիկ աւելի հակամարտ կ'ըլլան տարուելու, որ
Ա. Մանուչարեան աղբիւրը կ'որոշէր, որովհե-
տեւ նախագահութեան թեկնածու էր եւ ընտրա-
յալքաբէր քաշուելուն-ուարտուած դուրս գալուն
ուարձառով դառնալով իրենց ունի, «ճորից ցաւ ու-
նի», ուրեմն՝ պիտի քննադատէ բնականաբար: Բայց
երբ ուժային նոյն կառոյցներուն հասցէին սուր
քննադատութիւններով հրապարակ կու գալ «Իս-
կի Տահնագարեանի» ուժային կառոյցներուն մէկ
բաժանմունքին մէկ ալ վարիչը, որ կը նկատուի
Լեւոն Տէր Պետրոսեանի իմբալիին «ճերբին
օղակ»ին մէկ տարրը, հարցը արդէն կը տարբերի
եւ մարդիկ գարմացած վեր-վեր կ'անցնեն իրենց
յօնքերը, լայն կը բանակ աչքերը:
Իսկ իր Տահնագարեանի պատկերասփռուած յայ-
տարարութիւնները յայտնադնալ քաղաքական ռուս-
քի աղբիւրներէ ունեցած են անցեալ շաբաթ, Երե-
ւանի մէջ, որովհետեւ ան անխնայ եղաւ վարչապե-
տին, պաշտպանութեան նախարարին եւ բոլոր
անոցն ինքզինքի, որոնք սխալ կամ անբաւարար կեր-
պով կը վարէին իրենց պաշտօնները:
Իսկ իր Տահնագարեանի կատարած յայտարա-
րութիւնը եւ արձակած քննադատութիւնները առն-
ազն զգալացունք կարելի է որակել, մանաւանդ
որ աւելի ղեկը Լ. Տէր Պետրոսեանի անմիջական
յեղաբանները նկատուող անձերուն հրաժարակա-
նի պահանջը: Դեպքերու յաջորդ եւ յառաջիկայ
զարգացումները կրնան ցոյց տալ որ
ա. - Ի. Տահնագարեանի յայտարարութիւնները
կը ծառայէին ընդդիմադրութեան եւ ընդհանրա-
պէս ժողովուրդին զայրույթը «ճերբծէլու» եւ հոգի-
ները խաղաղեցնելու, գործնապէս ոչ մէկ փոփո-
խութիւն բերելով: Ասիկա նորահնար խաղ մը չէ,
ալլա յայտնի խաղեր կը խաղցուին բոլոր բռնատի-
րութիւններուն մէջ, մարդոց վրայ ձգելու համար
այն տղաւորութիւնը, որ «տեսէ ք, իրենք ալ գիտեն
որ սխալներ կան, իրենք ալ կը քննադատեն եւ
խոտաւորանան լուծումներ կ'առաջարկեն»:
բ. - Ի. Տահնագարեանի յայտարարութիւնը հոգ
եւ մթնոլորտ կը ստարտէ իշխանութեան բարձ-
րագոյն եւ ամենեւնի հեղինակաւոր մակարդակնե-
րուն վրայ որոշ փոփոխութիւններ իրագործելու:
Հ. Բազարեանի կամ մէկնէն իսկ Բ. Արաքսեանի
ու Վանու Սիլադեղեանի փոխարինման հաւանա-
կանութեան մասին գործընթացը արդէն ունի իրենց
երկար պատմութիւնը:
Ինչ որ ալ ըլլան զարգացումները, կը մնայ կէտ
մը, որ չի կրնար վրիպիլ տեւէ մէկուն ուշադրութե-
նէն: Դ. Տահնագարեանի յայտարարութեանց մէջ
ոչ մէկ ակնարկութիւն կար. որ խնդրոյ առարկայ
կը դարձնէր նախագահական ընտրութիւններուն
արդարութիւնն ու անոնց արդիւնքին հաւաստիու-
թիւնը:
Անոր խօսքերը շատ դիւրութեամբ կարելի է
բարգմանել հետեւեալ ձեւով. «Եկեք զոհողութիւն
Ս. ՄԱՀԱՅԻՔԵԱՆ

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՔՈՎԻ ՄԷՋ

**ԱՐԱՋԱԹ. ԵՒՐՈՒՆԻ ՎԱՍԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒԺ
ՀԻՒՄԷՅՆ. ՎԱՍԱԶԱՅՆԱԳԻՐՆԵՐԸ ՅԱՐԳԵԼ**

ԵՐԻՔՈՎ, 15 (ՌԵՇ-
ԹԸՐ) - Պաղեստինեան իշ-
խանութեան նախագահ
Եսաէր Արաքաթ Երեք-
չարթիօր, առաջին անգամ
ըլլալով, պաղեստինեան
Հոգի վրայ Հիւրնկայեց
արաբ ղեկավար մը, այն
պահուն, երբ Հեպտոնրի
հարցին մասին Իսրայէլի
Հետ Համաձայնութեան
նշոյլ չկայ տակաւին:
Յորդանանի Հիւսէյն
Թագաւորը, Արաքաթին
կերակցութեամբ, ուղղա-
թիւով Ամմանէն Երիթով
անցաւ: Չ) տարիէ ի վեր ան
առաջին անգամ ըլլալով
Այսրոյորդանան կ'այցելէ:
Հիւսէյն Թագաւորը մօտա-
ւորապէս չորս ժամ մնալ
ետք Երիթովի մէջ, վերա-
դարձաւ Ամման:
Խօսելով Իսրայէլի Հետ
տեղի ունեցող բանակցու-
թիւններուն մասին, Արա-
քաթ ըսաւ, որ ցարդ բա-
նակցող յանձնախումբը-
րէն ոչ մէկ յարաբերակցա-
բարձանագրած է, որովհե-
տեւ վարչապետ Պենիամին
Նեթանիահուի ներկայա-
ցուցիչները կը պահանջեն
նոյն անընդունելի պայ-
մանները: Արաքաթ աւել-
ցուց, որ գետնի վրայ,
իմաստալից բան չկայ,
որուն չուրջ կարելի ըլլայ
բանակցիլ: Արաքաթ դի-
տել տուաւ նաեւ, որ պատ-

**ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՊՈՅՈՅՆԻ
ՓՐԻՄԱՔՈՎ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿԷ
ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՇԱՐԺԱՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

ԳԱՀԻՐԷ, 15 (ՌԵՇԹԸՐ) - Ռուսիոյ արտաքին գոր-
ծոց նախարար Եւգենի Փրիմաքով այս ամսուան վերջա-
ւորութեան Միջին Արեւելք պիտի այցելէ՝ խաղաղու-
թեան գործընթացը յառաջնորդող մէջ դնելու առա-
ջարկներ քննարկելու համար, յայտնեց անոր փոխա-
նորդը, Երեքչարթի օր:
Փոխ նախարար Վիթթոր Փոսովալիուք, որ Սէուտա-
կան Արաբիա կ'ուղղուէր, Գահիթի օդակայանին մէջ
յայտնեց, որ Փրիմաքովի շրջապտոյտը պիտի ընդգրկէ
Եգիպտոսը, Յորդանանը, Սուրիան, Լիբանանը, Իսրա-
էլը եւ պաղեստինեան շրջանները:

**ՅՈՅՆ - ԿԻՊՐԱՅԻՆԵՐՈՒ
ՅՈՅՑ**

ՆԻԿՈՍԻԱ, 15 (ՌԵՇ-
ԹԸՐ) - Յոյն-կիպրացի
խումբ մը աշակերտներ
Երեքչարթի օրորոքից
մը կատարեցին Նիկոսիայի
Հեպտոնրի 400 հրաչ յնա-
րիչներուն հաճախութեան
երկուքի բաժնող «կանաչ
գիծ»ին երկայնքին, թուրք-
ական եւ փարատելու հա-

**ԵՐՊԱՔԱՆ - ԽՈՐՀՐԳԱՔԱՆ
«ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»Ը ԱՅՍՕՐ**

ԱՆԳԱՐԱ, 15 (ՌԵՇԹԸՐ) - Թուրքիոյ վարչապետ Նեմ-
էլ Խոստին հրապարակեց Զորքարթի օր (այսօր) իր կտա-
վարութեան քայլերը զատապարտող խորհրդարանա-
կան բանաձեւ մը պիտի դիմագրաւէ: Անիկա լաւիք ընդ-
դիմադրութեան կողմէ առաջին փորձն է վերջ տալու
երկրին յայտնական վարչապետին պաշտօնավարութեան:
Եթէ իսր րանաձեւը վաւերացուի, հրապարակ եւ անոր
կառավարութեան Արեւմուտքի համակիր ընկերակից-
ները, որոնք մօտաւորապէս 100 օրէ ի վեր իշխանու-
թեան վրայ են, կրնան վստահութեան քուէի նիստ դի-
մագրաւել:
Երեքչարթի օր, հրապարակ ինքնավստահ կերպով Բա-
րօրութիւն կուսակցութեան խորհրդարանական պլո-
քին հաւատեց, թէ քուէարկութիւնը աւելի եւս գորաջ-
նէ կառավարութիւնը, որ իր ընթացքը պիտի շարունա-
կէ: Մինչեւ 2000 թուական պիտի պաշտօնավարենք, յայ-
տարեց ան:
Թուրքադաքական մէկնարաններու համաձայն, կա-
ռավարութիւնը վստահութեան քուէի հարց պիտի չդի-
մագրաւէ: Սակայն, կ'ըսեն անոնք, Թուրքիոյ տնտեսա-
կան, քաղաքական եւ արտաքին քաղաքականութեան
աւելցուող հետզհետէ աւելի մեծ հարցերը, որոնք կ'ան-
տեսուին կամ նոյնիսկ աւելի ծանրակշիւ կը դարձուին
տկար կառավարական ընկերակցութեան կողմէ, գրե-
թէ ապահով կը դարձնեն, որ իշխանութեան վրայ պիտի
նուրջ Բարօրութիւն կուսակցութիւնը նոր մարտա-
հրաւրներ պիտի դիմագրաւէ:
Ընդդիմադիր կուսակցութիւնները ներկայացուցած
էին կառավարութեան քայլերը զատապարտող առան-
ձին բանաձեւեր, որոնք աւելի ուշ միաձուլուած էին,
իրեն բողոք հրապարակի Լիպիա այցելութեան: Ան դա-
ւախօսութիւն մը յաճ էր նախագահ Մուամմար Քա-
դաֆիի կողմէ՝ փութը փոքրամասնութեան հանդէպ
Թուրքիոյ կեցուածքին մասին:

MiniMA
Une monture que l'on ne sent pas
Une monture que l'on voit à peine
une exclusivité
BOGHOS OPTIC
OCTIEN VISAGISTE
AUTOSTRADE JOIEIEN - TEL. (01) 870016

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԱՐԳԻՒՆՔԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ**

Հայաստանի մէջ 22 Սեպտեմբերին տեղի ունեցած
նախագահական ընտրութիւններուն եւ քուէահամարի
րնթացքին իշխանութեանց կողմէ կատարուած գեղծում-
ներուն եւ խարդախութեանց մասին միջազգային 2 հաս-
տատում արձանագրութեանց երկէ կ, անուղղակիօրէն ժխ-
տելով իշխանութեանց այն առարկութիւնները, թէ գեղ-
ծումներ տեղի չեն ունեցած:
Առաջին հաստատումը խորքին մէջ վերահաստատում
մըն էր՝ արդարեւ, Եւրոպայի Ապահովութեան եւ Գոր-
ծակցութեան կազմակերպութիւնը յայտնեց, որ դէտե-
րու պատուիրակութեան երկրորդ տեղեկագիրը, որ
կասկածի տակ կ'առնէր քուէարկութեանց արդիւնքին
արդարացիութիւնը, հաստատուած է եւ պիտի հրապա-
րակուի Նոյեմբերի սկիզբը:
Երկրորդ հաստատումը կատարուեցաւ Երեւանի մէջ,
միջազգային անկախ՝ ոչ-կառավարական խմբակի մը

**ՖՐԱՆՍԱ ՊԻՏԻ ՑՈՒՅԱԴՐԷ
«ԱՄՕԹԻ ՅԱՆԿ»Ը**

ՓԱՐԻՑ, 15 (ՌԵՇԹԸՐ) - Ֆրանսա Երկուշաբթի օր
յայտնեց, թէ ցուցադրութեան պիտի դնէ «ամօթի ցան-
կը», ուր վաւերագրական տեղեկութիւններ կան այն
դերակատարութեան մասին, գոր ֆրանսացի պետա-
կան պաշտօնեաներ եւ ոստիկաններ ունեցած են Բ-
Աշխարհամարտի օրերուն, օժանդակելու համար նացի-
ներուն՝ հրեաներ հալածելու համար:
4 տարի տեւած քննութիւններէ ետք, պատմաբաննե-
րու խմբակ մը գտած է, թէ վաւերացուողները, որոնց
գոյութիւնը երկար ատեն հերքուած էր իշխանութիւն-
ներուն կողմէ, մանրամասնօրէն ցոյց կու տան այն
խանդավառութիւնը, գոր ցուցարեւած է Բ. Աշխարհա-
մարտին նացիներու համակիր Վիլի վարչակարգը
օժանդակելու համար Հիթլէրի վերջին լուծումին իրա-
գործումին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու կողմ կ'ընենք օտարաւոյատակ մեր այն
հալորդներուն, որոնք երկրորդ աւիւթով դիմում
ներկայացուցած էին իրանահայաւատակութեան,
ներկայախալու Ազգ. Առաջնորդարան, ստանալու
համար Առաջնորդարանի կողմէ հշոյնած իրենց
թիւերը, Բողոքարարներու համապատասխան վճար-
ման ստացագիրով:
Յայտնենք, որ այս թիւերը կապ չունին պետու-
թեան կողմէ յառաջիկային տրուելիք թիւերուն հետ:
Բոլոր անոնք, որոնք տակաւին չեն ներկայացած,
ՎԵՐՁԻՆ ԱՌԻԹԵ ԵՎ ՎԵՐՁԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՄ՝ Չո-
րեքշաբթի 16, Հինգշաբթի 17 եւ Ուրբաթ 18 Հոկտեմ-
բեր, ժամը 15էն 18, Ազգ. Առաջնորդարանին կից
գտնուող սրահը:
ԴԻԻԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՄԱՀՈՐ - Լ. Կը խնդրուի ներկայացողներէն
իրենց հետ ունենալ անձնաթուղթի լուսապատե-
նը. իսկ եթէ փոխանորդարար պիտի ներկայանան
փոխանորդին եւ հոյատարութեան դիմում կատա-
րողին անձնաթուղթի լուսապատեճեր:
2. - Ազգայիններէն կը խնդրուի յարգել վերոյիշ-
եալ պայմանաւորումը: Բոլոր անոնք, որոնք կ'ան-
տեսեն այս պայմանաւորումը, հետագային իրենք պի-
տի կրեն որեւէ սխալի պատասխանատուութիւնը:

**ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ
NATIONAL - PANASONIC
(VIDEO - CLINIC)
ԹԻՒԹԻՆՆԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ**

Հանդիման ունի յայտարարելու, թէ բոլոր
անոնք, որոնք ունին 1988էն 1996ի մոտե՛
National - Panasonic վաճառանիշով Videotե՛
կրնան ներկայանալ հաստատութեան կեդ-
րոնը Երկուշաբթի, 21 Հոկտեմբեր եւ Երեք-
շաբթի, 22 Հոկտեմբեր, առաւօտեան ժամը
8.30էն կէսը՝ ետք ժամը 3.30 եւ իրենց վի-
տէոներուն ստուգումը, մաքրութիւնը եւ նո-
րութիւնը կատարել ձրիօրէն, մասնագէտ
ներու ձեռով: Նորոգութեան համար, անիւր-
աժեշտ փոխարող կտորներուն վրայ կ'ըն-
ծալուի մինչեւ 50 առ հարիւր վեղջ:
● Բախտաւորները պիտի ստանան
նուերներ:
● Այս առիթը չ'ընձայուիր ապօրինի ձե-
ւով Լիբանան մուտք գործած վիտէոներուն:
● NATIONAL - PANASONIC նորոգութեան
կեդրոն. Սնորհաւ, Սնորհաւ չ'ընթերէն
դէպի Աղբաւան ակումբի վերելքին վրայ:
Հեռ. 413184 եւ 411358:

Արուեստագետ Փօլ Կիրակոսեանի ծննդեան 70ամեակին առիթով, «Հմակոս» ցուցասրահը կ'ընթացի ցուցադրել հանգուցեալ արուեստագետի գործերէն դիմակարներու շարք մը:

Հետեւաբար, կոչ է'ւղղեցնել բոլորանոց, որոնք Փօլ Կիրակոսեանից է դիմակարներուն հետ, կապ պահել հեռաձայնելով (01)888643 թիւին, որպէսզի ապագործերը մաս կազմեն ցուցահանդէսին:

Բոլոր գործերը պիտի աւանդուագրուին եւ ցուցահանդէսէն հետք պիտի վերադարձուին իրենց տերերուն: Ցուցահանդէսը կը ծրագրուի Նոյեմբեր վերջերուն:

ՎԵՐԱՄՈՒՏԻ ԽՈՂԵՐ

«ՄԵՐ ԴՊՐՈՑԸ ՊԻՏԻ ՎԵՐԱՇԻՆՈՒՒ»

1972 Մալխա Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանի Բ. կարգի աշակերտ էի: Մեր դասարանը կը գտնուէր եկեղեցւոյ կից շէնքին տանիքը: Փոքր սենեակ մը, ուր ձմեռը անձրեւի ջուրը կը կաթեր ներս, իսկ գարնան, երբ օդը կը ջերմանար, անիկա կը վերածուէր փուռի մը ու մենք կը նմանէինք կարմը-բած ֆայերու:

Զբօսանքէն ետք բարձրացանք չորս յարկ ու քըրտ-նարթոր վիճակով մտանք դասարան: Թուաբնութեան ուսուցչուհին մեզ կը սուպեր: Երբ տեղաւորուեցանք մեր գրասեղաններուն հետին, ան բարձրացաւ ամպիւսն, պահ մը մեզ դիտեց ու հանգիստնոր ոճով մը յայտարարեց.

«Այս տարի դուք պիտի ըլլաք այս դասարանի վերջին աշակերտները: Յառաջիկայ տարի, ձեր դասընկերները, նաեւ՝ դուք, նոր դասարաններ պիտի ունենաք: Մեր դպրոցը պիտի վերաշինուի:

Մենք ծափեցինք առանց ամբողջովին ըմբռնելու յայտարարութեան իսկական իմաստը: Պարզապէս հրճուեցանք, որ նոր դասարաններ պիտի ունենանք. նոր գրասեղաններու վրայ պիտի նստէինք: Փոփոխութիւն մը տեղի պիտի ունենար եւ ատիկա մեզի ուրախութիւն կը պատճառէր: Ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

Յաջորդ տարեշրջանին, դասընկերներուս հետ մուտք գործեցինք մեր վերաշինուած դպրոցի սեմէններս: Ամէն բան փալուռն էր: Մաքուր ու լուսաւոր սենեակներ, լայն նրբանցքներ, հասգստաւետաստի-նաններ, ընդարձակ բակեր: Ամէն կողմ կարգ ու կանոն: Ներկի հոտը տակաւին օդին մէջ էր: Լուսաւոր միջավայր, ուր պիտի սորվէինք, խաղայինք եւ... ձեռն ուտէինք:

Յետոյ, օրերը սահեցան, նոր ներկուած պատերը սկսան հետքեր ունենալ ու մեր կեանքը բնականոն կերպով տրոփեց դպրոցին մէջ:

... Վերամուտի օրերն էին անցեալ շաբաթ:

Նախակրթարան ալ յայտնեցի: Աստիճաններուն վրայ հանգիւյեցալ վարիչ մանկապարտիզ պա-նուհիին: Քաղաքավարական ընթացիկ խօսքերէ ետք՝

«Գիտե՞ս, մանկապարտէզի բաժինին ներքին կա-հաւորումը փոխեցինք. մանկամուտը նոր մահա-կալներ ունի: Կ'ուզե՞ս անգամ մը տեսնել:

«Մեծ հաճոյքով...

Մտանք ընդարձակ, գրեթէ փոքր սրահի մը չափե-րուն հասնող լուսաւոր սենեակ մը: Գոյնզոյն մահ-նակալներ շարուած էին դէմ դիմաց: Իւրաքանչիւ-րին կնիքին՝ սեղան մը: Քիչ մը անդին կտր, քառա-կաւսի, եռանկիւն աւելի մեծ սեղաններ: Անոնց վրայ՝ խաղալիքներ, պտուղիկներ:

«Այս տարի երեխաները պիտի ընդունինք հոս, նոր կահաւորուած սենեակներու մէջ: Ամէն բան վե-րանորոգեցինք:

Շուրջս դիտեցի եւ լիջեցի: Այսպէս երկվայրկեան-ներու ընթացքին, երեւակայութեանս մէջ յայտնուե-ցան մեր հին դասարանին գորշ պատերը, ապա վե-րաշինուած դպրոցին օդասուն, ընդարձակ դասա-րանները: Եւ հիմա, հոս, աչքերուս առջեւ այս դա-սարանը, լուսաւոր ու արդիական:

Աշակերտները անդադար կը փոխուին: Նորերը կու գան. «հին»երը կը մեծնան, կը հեռանան, կ'ըլ-լան երիտասարդ, բայց զգացումը կը մնայ նոյնը: Լուսաւոր ու սիրուն երբեմնի դասարանիդ հանդէպ տարօրինակ կարօտը, որ բոլորից, գոյնի մը կամ ձայնի մը հետ յանկարծ կը վերալստնուի, քեզ կը վերադարձնէ անցեալին: Ասոր մէջ ինչ երախտա-շատ ներգրում ունին մեր ուսուցիչները, մանկա-պարտիզպանուհիները, տնօրէնը եւ այն բոլոր ան-ձերը, որոնք օր մը հալարտութեամբ կը յայտարա-րեն. «Իպրոցը իրաւանորոգեցինք»:

Եւ դուն, աչդ հաստատումին ի լուր, կը փայտիս ու կը լիջես այն բոլորը, որ ապրեցար քու վերանորոգ-ւած, վերականգնուած դասարանիդ մէջ:

ԱՐՄԵՆ ԱՊՏԱԼԵԱՆ

Շ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՋՕՐԱԿՑԻ ՆԱԽԱԳԱՐ ՊԻԼ ԲԼԻՆԹԸՆԻ

Շ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը, մանրա-մասնօրէն վերլուծելէ ետք 1996-ի նախագահական ընտրութեան հարցը եւ ա-մերիկահայ գաղութին չա-հերքելի հարցը, լիք գործող կը կանգնի նա-խագահ Պիլ Քլինթոնի վե-րընտրութեան:

1992-ին, Պիլ Քլինթոնի ընտրութիւնը աննախըն-թաց եւ մեծապէս արդիւ-նաւէտ ժամանակաշրջան մը հանդիսացաւ ամերիկա-հայութեան համար՝ ամե-րիկեան քաղաքական կեանքին ներս մեր մա-նակցութեան եւ արդեւու-թեան հզօրացման իմաս-տով, յատկապէս Հայաս-տանի եւ Լեւոնային Ղաթա-բաղի վերաբերող միջադ-գային հարցերու ծիրէն ներս: Կր գնահատենք այն իրականութիւնը, որ նա-խագահի աղբյուրն պատ-րաստակամութիւն ցույց-բերեց ամերիկահայու-թեան նկատմամբ եւ քա-ջայրեց գալն, որպէսզի գործէ իրեն մասնակից ժողովրդավար, բարգա-ւաճ եւ ապահով Հայաստան մը կառուցելու համար:

Ամերիկահայ գաղութը եւ հապէս որոյր ամերիկա-ցիները այս տարի թախտա-ւոր են, որ երկու անհառու-թեան ունենին Մ. Նահանգներու նախագա-հութեան պաշտօնին հա-մար: Ամերիկայի Հայ Դա-տի Յանձնախումբին գո-րակցութիւնը յայտ կըրե-րէ՛ն այն ուժեղ կապերը, որոնք մշակուած են Քլին-թոնի վարչակազմին հետ, ինչպէս նաեւ նախագահին իրաւորութիւններ՝ ի նը-պաստ ամերիկահայութիւ-նը շահագրգռող հարցե-րուն: Նախագահին մեր գո-րակցութիւնը մեզ չի շեղե-ցրեր հանրապետական

Յանձնախումբը ամրոց-ջութեամբ կ'ընդունի, թէ կարգ մը հարցեր անյոյժ կը մնան, յատկապէս ինչ կը վերաբերի Հայկական Յե-րասպանութեան ճանաչու-մին ու պատշաճ ոգեկոչու-մին: Նախագահին պաշտօ-նավարութեան երկրորդ շրջանին կ'ակնկալենք, որ իր առաջին չորս տարինե-րուն նուաճումներուն վրայ նորերը անցնան ու աշխու-ժօրէն գործենք Հայ Դա-տին ի նպաստ՝ վերոնշեալ կարեւոր խնդիրներու ծի-րէն ներս:

ՀԱՅ ԴԱՏԻ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՇԵՏ ՅԱՆԳԻՊՈՒՄ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԵՋ

ՈՒԱՇԻՆԿԻԹԸՆ - Շ. Յ. Դաշնակցութեան Ամերի-կայի Հայ Դատի Յանձնա-խումբը հարցողեց, թէ Եր-անուշարթի, Հոկտեմբեր Դին, Սպիտակ Տան մէջ, Մ. Նահանգներու բոլոր շըր-ջաններէն Յանձնախումբի 55 գործիչներ հանդիպում մը ունեցան պետական րա-ժանմունքի եւ Ազգային Ապահովութեան խորհու-րդի բարձրաստիճան պաշ-տօնատարներուն հետ:

Այս հանդիպումը կ'իյ-նար Յանձնախումբին կազմակերպած գործիչնե-րու խորհրդածողովի մը ծիրին մէջ:

25 տարբեր նահանգնե-րէ ժամանած Հայ Դատի Յանձնախումբին գո-րակցութիւնը յայտ կըրե-րէ՛ն այն ուժեղ կապերը, որոնք մշակուած են Քլին-թոնի վարչակազմին հետ, ինչպէս նաեւ նախագահին իրաւորութիւններ՝ ի նը-պաստ ամերիկահայութիւ-նը շահագրգռող հարցե-րուն: Նախագահին մեր գո-րակցութիւնը մեզ չի շեղե-ցրեր հանրապետական

կարգի Ռիչըրտ Մու-նիակոթար եւ Ազգային Ապահովութեան խորհու-րդէն ներս ժողովրդավա-րութեան, մարդկային ի-րաւեցեալ եւ մարդասիրա-կան հարցերու վարիչ Մէթ Լորին:

Վարչակազմի պաշտօ-նատարները շեշտեցին, թէ Մ. Նահանգներ յանձնա-ուռ են Հայաստանին օ-ժանդակելու, որպէսզի ան կարենայ զարգանալ իրեւ-անկախ եւ տնտեսապէս կայուն պետութիւն: Այս կատարակին համար, նշեցին անոնք, Մ. Նահանգներ անցնող չորս տարիներուն աւելի քան 500 միլիոն տո-լար արժողութեամբ մար-դասիրական օժանդակու-թիւն առաքած են Հայաս-տան: Ապագայի համար կը ծրագրուի զարգացումի յատուկ օժանդակութիւն՝ ամրապնդելու համար Հա-յաստանի ընկերային, քա-ղաքական եւ տնտեսակա-ն ենթակառուցը:

Ազգային Ապահովու-թեան խորհուրդի պաշտ-նատարները արտայայտե-ցին նաեւ իրենց խոր մտա-հոգութիւնը վերջին ընտ-րութիւններուն գծով, յատկապէս ու ինչ կը վերա-բերի քուէներու հաշուա-մի սկզբունքի խախտումին, քուէարկողներու ցանկե-րուն ճշգրտութեան եւ քուէարկութեան գաղտնա-պահութեան: Անոնք դատա-պարտեցին ցուցարարնե-րու փոքր խմբակի մը կող-մէ կառավարական պաշ-տօնատարներու դէմ կա-տարուած ըրտութիւնը, միաժամանակ շեշտակի-րէն դատապարտելով Հ. Հ. կառավարութեան կողմէ անհամեմատ եւ անհարկի-օրէն ուժեղ ձեռքով ընդ-դիմութեան ճգնաժամը եւ մարդկային իրաւանց խախտումը: Այս ուղղու-

թեամբ տեղի ունեցաւ մտ-քերու արդիւնաւէտ փո-խանակում մը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂԱԸ

Հայ Դատի Յանձնա-խումբերու գործիչներու եւ օրեայ խորհրդածողովի կայացաւ մայրաքաղաք Ուաշինկթոնի մէջ: Յայ-տապիրին մէջ կար վերո-նշեալ հանդիպումը, ինկի-րլսմէն Փիթըր Վիսթրոսթի-ի պատիւ ընդունելութիւն մը եւ ամերիկահայութեան քաղաքական ներգործօն դերակատարութեան մա-սին միօրեայ եզրուցում՝ քննարկում մը:

Կիրակի, Հոկտեմբեր 6-ի առաւօտուն, Յանձնա-խումբի Արեւմտեան Ամե-րիկայի գրասենեակի վա-րիչ - տնօրէն Վիլյէն Սո-նենց - Փափագեան գեկու-ցեց Հայաստանի օժանդա-կութեան, շրջափակման, Արցախի հարցին եւ Հայաս-տանի մէջ ժողովրդավա-րութեան մասին:

Կառավարական հարցե-րու պատասխանատու Քրիս Հէփման ներկայա-ցուց Յանձնախումբին օ-րէնսդրական մարզէն ներս նախաձեռնութիւններուն մասին: Մասնակիցները ա-պա երկարօրէն աւիթը ու-նեցան քննարկելու այս հարցերը հետապնդելու անհրաժեշտ ռազմավա-րութեան մասին:

Կէսօրէ ետք քննարկուե-ցան գործարար իշխանու-թիւններու հետ յարաբե-րութիւնները, ինչպէս նա-եւ՝ նահանգային մակա-րդակի վրայ քաղաքակա-նութեան օժանդակութեան միջոցները: Երեկոյեան հա-մադումարին մասնակից-ները հիւրէն էին ծանեւ Ար-տեմիս ձկնիքեաններուն, անոնց ընկերպարանին մէջ:

Նախորդ օր, Շարաթ, համագումարին մասնա-կիցները ներկայ գտնուե-ցան Ուաշինկթոնի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ Փիթըր Վիսթրոսթի-ի պատիւ տրուած ընդու-նելութեան՝ Ֆրէնչ եւ Պարպա Հէփմաններու ընկերպարանին մէջ:

ՏԵՐ ՂԵՏՐՈՍԵԱՆ ԹՐՔԵՐԸՆՈՎ ԿՈՂԶՈՒՆԷ ՏԵՄԻՐԷԼԸ

Պոլսում Եր պաշտօնակից «Մարմարա» օրաթե-րը կը հաղորդէ, որ բրքական ԹԷ. պատկերասփիւ-ռի կալանը պատկերասփռած է նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հետ կալանք հարցադրոյց մը, որուն մէջ Տէր Պետրոսեան ըսած է, որ՝ «Հայերը պատրաստ են վերադարձնելու գրաւեալ հողերը (խօսքը Արցախի տագնապին մասին է - Ա.):

Տէր Պետրոսեան յայտնած է, որ՝ «Իրենց միակ ցանկութիւնը Լեւոնային Ղաթաբաղի քաղաքակա-ն կարգավիճակի ճշգրտմէն է եւ Լաչինի միջանցքի ինդրին լուծումը»: Տէր Պետրոսեանի կարծիքով, «Թուրքիա կը պիտի, երբ երկու երկիրներուն յա-րաբերութիւնները տարբեր ազդակներ կ'աշխատեն»:

Լեւոն Տէր Պետրոսեան աւելի չէ փախցուցած նաեւ բուրքը տեղեակ պահել ընտրութիւններուն ընթացքէն: «Ընդդիմադիրներու բռնարարները վիրավորեցին Հայաստանի արժանապատուութիւնը եւ բարոյական վնաս պատճառեցին», ըսած է ան, առանց անշուշտ լիջելու, թէ իշխանութիւնները ինչ վերաբերում ունեցան ընդդիմադիր ղեկավար-ներու նկատմամբ:

Հարցազրոյցին աւարտին, Լեւոն Տէր Պետրոսեան ողջունած է բուրք ժողովուրդը եւ Սիւլեյման Տեմիրքը բրքերէնով. «Սեյմա՛ Տեմիրքէ՛ վէ բուրք հալքընա՛» (Բարեկներ Տեմիրքին եւ բուրք ժողո-վուրդին) ըսած է ան:

ԶԵԿՈՒՑԱԿԱՆ ՀԱՒԱՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԻՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՇՈՒՐԶ

Շ. Յ. Դ. Թորոնթոյի «Սողոմոն Թեհլիրեան» Կո-միտէի կազմակերպութեամբ, Թորոնթոյի Հայ Կեդ-րոնի սրահին մէջ տեղի ունեցաւ զեկուցական հա-ւաք, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, Հայ Աւետարանական համայնքի հովիւ վեր. Եսայի Սարմազեան, եւ աւելի քան 300 հայորդիներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ «Սողոմոն Թեհ-լիրեան» Կոմիտէի ներկայացուցիչ ընկ-Գրիգոր Շի-թիրեան, որ խօսելէ ետք զեկուցական այս հաւաքի կազմակերպման նպատակին շուրջ, հրաւիրեց Շ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամ ընկ-Վիլյէն Յով-սէփեանը՝ խօսելու համար «Հայաստանի Նախա-գահական Ընտրութիւնները եւ Ներկայ Իրավիճա-կը» նիւթին շուրջ:

Զեկուցարար ընկերը մօտ կէս ժամ խօսեցաւ 22 Մեպտեմբերին, Հայաստանի մէջ կատարուած նա-խագահական ընտրութիւններուն ընթացքին տեղի

ունեցած խախտումներու, խարդախութիւններու եւ ոչ օրինական միջոցներով քուէներ ապահովելու կա-ռավարական շրջանակներու ի գործ դրած միջոցա-ռումներուն մասին, արդիւնքներուն քաջայայտու-մէն ետք կատարուած բողոքներուն, ցուցերուն եւ բռնութիւններուն մասին, ընդգծելով այն իրողու-թիւնը, որ իշխող խումբը, գլխաւորութեամբ նախա-գահին, ամէն միջոցի դիմած է իշխանութեան արեւո-նները պահելու համար: Ապա ընկերը յայտնեց, թէ Շ. Յ. Դաշնակցութեան Հայ Ժողովուրդին արդար իրա-ւունքներուն հետ է եւ կը դատապարտէ խաղաղ ժողովուրդին վրայ ուժի գործադրութիւնը եւ կու-սակցութիւններու կասեցումի եւ ընդդիմադիր դե-կավարներու ձեռնարկութիւնը:

Զեկուցումէն ետք եղան հարցումներ, որոնց յայ-նօրէն պատասխանեց ընկերը՝ շեշտելով Շ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովի որոշումը, թէ որեւէ ատեն Դաշ-նակցութիւնը թոյլ պիտի չտայ բռնի միջոցներով, ուժի գործադրութեամբ եւ արխանահեղութեամբ Հա-յաստանի իշխանութիւնը տապալել: Դաշնակցու-թիւնը օրինաւոր միջոցներով, ժողովրդավարական օրէնքներով միայն պիտի հասնի իր նպատակին՝ Հա-յաստանը օժտելու ժողովրդավարական կարգերով, աւելի տալով ժողովուրդին, որ ընտրութիւններով հասնի արդար իրաւունքներուն:

Հաւաքի աւարտին, ներկաներուն համամու-թեան արժանանալէ ետք, հետեւեալ դիմումը ու-ղարկուեցաւ դեպի անտան միջոցով.

Մեծալորդ պիար Բաբգէն Արարքեան Ազգային Ժողովի նախագահ Մեծալորդ պիար Գաղիկ Յարութիւնեան Սահմանադրական դատարանի նախագահ Մեծալորդ պիար Սալաւորդ Դեղիքեան Վերականգնողական Ընտրական Յանձնաժողովի նախագահ

Հայաստանի Հանրապետութեան նախագահա-կան ընտրութիւններու արթիւ իշխանութիւններուն ցուցաբերած քաղաքական վարքագիծը ոտնակոխ կ'ընէ մեր երկրին արդէն իսկ իշխութեւ ժողովըր-դավարական գործընթացը եւ ծանր հարուած կու տայ Հայաստանի միջազգային վարկին: Սահմա-նադրական վարչապետի քողիկ տակ քալ առ քալ կ'իրագործուի մեր ժողովուրդին շարունակական իրաւագրկումը իր իսկ իշխանութիւններուն ձեռ-քով:

Սեպտեմբեր 22-ին ի վեր դեպքերու արագ ըն-թացքը նախագահական ընտրութիւններու նախօ-րէին իշխանութեան վերին օղակներուն մէջ ակնը-յայտ դարձած խուճապը, ընտրութիւններու ար-

ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՀԵՏ

●ՊՈԼՍՈՅ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրա-հին մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը՝ նուիրուած մեծ լեզուարան Հրաչեայ Աճառեանի ծննդեան 120ամ-եակին, նախագահութեամբ Կրօնական Ժողովի ատե-նապետ Մեսրոպ արք. Մուկաթեանի:

●ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ մէջ տեղի ունեցաւ ձեռնարկ մը՝ նուիր-ւած երաժշտական, մտաւորական եւ երապարակագիր փրոֆ. Նիկոլոյս Թաթևիզեանի նոր լոյս տեսած «Սայաթ Նուա» գիրքին եւ ինդիանայի ձեռնարկին 70ամեակին:

Ձեռնարկը կազմակերպած էր «Լարո» երաժշտական ընկերակցութիւնը:

●ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ մէջ վերահրատարակուեցաւ Վտա-րանդիի «Վայրի Վարդեր» բանաստեղծութիւններու գրքակը:

Գիրքը նուիրուած է Պաբուր փետրուարեան գրեթե-մասններուն: Անիկա կր բաղկանայ 31 էջերէ եւ կը պա-րունակէ Վտարանդիի քնարական գործերը՝ նուիրուած մասնաւորապէս հայրենի ընտրութեան:

Նշենք, որ գիրքին առաջին հրատարակութիւնը կա-տարուած է Վառնայի մէջ, 1905-ին:

●ՅՐԱՆՍԱՅԻ Քոլպէն Կեդրոնի հանդիսատահին մէջ տեղի ունեցաւ դասախոսութիւն մը «Հայկական Արուես-տը» թեմայով, կազմակերպութեամբ Ֆրանսայի Ազգա-յին Գրողարանին:

Օրուան բանաստեղծ իր Սորպոնի դասախոս, կովկասե-ան արուեստի մասնագէտ Ժան Միշէլ Թիլի:

●ՊՈԼՍՈՅ «Բացօրեայ» բառերին սրահին մէջ Ս. Փե-րեպոյր րէկ պալէի խումբը ներկայացուց Սերվանթէսի «Տոն Քիչոր», Խեղրի Մը Երազները» գործը: Պալլիի պիտի հանդէս եկաւ հայաստանցի պարող ետրի Անահան:

●ՊԵԼՃԻՔԱՅԻ Լուկէն քաղաքին մէջ տեղի ունեցաւ հայագիտութեան հարցերու նուիրուած միջազգային Դրդ խորհրդածողով, մասնակցութեամբ այլ երկիրնե-րէ ժամանած լիսուն հայագէտներու:

●ՎԵՆԵՏԻԿԻ Պիլեմալի շրջափակին մէջ տեղի ունեցաւ հայ արդի նարարապետութեան նուիրում ցուցահա-նդէս:

Նշենք, որ այս ցուցահանդէսը մաս կը կազմէր նարա-րապետութեան նոր միջազգային ցուցահանդէսին, որ տե-ղի կ'ունենայ Վենետիկի մէջ, երկու տարին անգամ մը:

●ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ մէջ լոյս տեսաւ հայրենի հանրա-ձանօթ ֆիլմարուեստագէտ Յակոբ Թահմիզեանի «Հա-մաշխարհային կիլոյն» ձերբագրութեան գիրքը: 759 էջ հաշուող այս ծանալուն աշխատանքը կը բա

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

ԼԵՒՈՆ ՅԱԿՈԲԻ, ՍԹԱՓՈՒԷՔ

Այս բաց նամակը յղուած է Լեւոն Տէր Պետրոսեանին ռուս գրագիրուհի Ինեսա Բուրկովայի կողմէ:

Հեռագէք: Դուք այլեւս նախագահ չէք: Սեպտեմբերի 22ին ժողովուրդը ձեզ չի ընտրել: Դա՛ եմ վկայում՝ դիտորդները: Նրանք անցկացնում էին ձայների գուգահեռաշուշում: Գրեթէ ամենուրեք նրանք արձանագրել են ընտրական օրէնքի ստանաւում: որոշ տեղերում՝ ձեր հաճույակատարները զինուորներով լեփ-լեցուն փոխադրակառքեր էին տանում ընտրական տեղամասից տեղամաս, որոշ տեղերում տարիներով մնի երես չտեսած սով-եայներին անվճար խորոված էին բաժնում՝ ասելով. «Գնացէք եւ բուէարկէք յօգուտ Լ. Տէր Պետրոսեանի», որոշ տեղերում ոստիկաններն արգելադրում էին դիտորդներին մուտքը ընտրական տեղամաս եւ անգամ ձեռնում էին նրանց, ովքեր արժանապատիւ էին եւ հնարամիտ: Ձեղծարարութիւնները հրապարակուած են: դա ընդդէմ օրէնքի եւ իղիքի գործած իսպառակ ոնիր-ներին երկար ցուցակ է: Մի՞թէ դուք չէք ամաչում: Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի չորս անդամներ, իններով ազնիւ, յայտարարել են, որ ընտրութիւններին արդիւնքները կեղծուած են:

Ուրեմն՝ հեռագէք: Հասկացէք, որ ժողովուրդը բօթափել է աղատու-թեան, իսաւրի եւ լուսալքութեան հետեւանքով առաջացած բուք ճշշուածութեան հնգամեայ բեռը: Նրա համար դուք այլեւս այն Լեւոնը չէք, որին մա սիրում էր. յաշտում, գնահատում՝ որպէս իր առաջնորդի, եւ որին ցնծութեամբ դարձրեց նախագահ՝ տօնելով ընդդէմ բռնատիրութեան տարած սեփական յաղթանակը: Ժողովուրդը աստիճանաբար ըմբռնեց, որ սխալել է: Դուք այն չէք, ինչի տեղ նա ձեզ դրեց:

Դուք չթերեւացրեցիք ժողովրդի տառապանքների բեռը՝ ամեն ինչ պատ-նառաքանելով շրջափակումով, չնա-յած արդեն չկար Գորբաչովը, չկա-նորհրդային Միութիւնը:

Աւելին. դուք խլացել էք, կուրացել, չէք տեսնում ձեզ բարձունքի հասցրած ժողովրդի վիճակը: Դուք, ապրելով թագաւորական շուշու-թեամբ, ձեր մոտքի վրայ մէկ օր անգամ չէք փորձել, թէ ինչպէ՛ս է հնա-րաւոր ապրել առանց ելեկտրականու-թեան, Իկ. դարի նախաշմից վերա-դառնալով 1000 տարի ետ՝ դէպի նրա-գր, թիթեղեայ վառարանը, ջրհորը, չէք լսել սոված երեխայի ճիչը, չէք լսել ալրիի լուսահատ հառաչանքը, չգիտեք, թէ ինչ է նշանակում լինել գործազուրկ, ինչ է նշանակում չկա-րողանալ կերակրել սեփական ընտա-նիքին, անգամ եթէ աշխատանք ունես, աշխատանքի դիմաց վճարում եմ 5-8 տոյարամասվճար, այլ ոչ թէ ժամավր-ճար: Զէ, որ դա ձրի աշխատանք է, ստորութիւն: Ձեզ չի յուզում, որ հա-յութեան մէկ յորտորը հոգու կկիծով հեռացել է հայրենիքից, որպէսզի դրամ վաստակի ինչպէս իր, այնպէս էլ՝ տանք մնացածներին համար: Ձեզ չի մտահոգում, որ դուք թուրքերի փո-խարեն շարունակում եք նրանց «ար-բագան» գործը՝ Հայաստանի հալածա-փումը: Ո՛րտեղ է ձեր պարտքի զգա-ցումը հայրենիքի եւ ժողովրդի հան-դէպ, եթէ ձեր կեկավարութեամբ, քա-յալուած է հնարապետութեան տնտե-սութիւնը, հազիւ է շնչում գիտու-թիւնը, արուեստը, գրականութիւնը,

կրթութիւնը. կորսում է Հայաստանի հայարտութիւնը ու ապագան:

Դուք կ'ասեք, թէ առարկայական դժուարութիւնները շատ են: Այո, այդ-պէս է, եւ եթէ ի զօրու չէիք լաղրահա-րելու դժուարութիւնները, ապա պար-տաւոր էիք աւելի վաղ ազատել նախա-գահական աթոռը: Սակայն դուք կ'առ-չել էք արտոնին: Ձեզ դուք են գալիս շուշուութիւնը, ցոփ կեանքը, ընդունե-լութիւնները, արտասահմանեան ուղե-ւորութիւնները, մեծարումը, ստորա-քարշուքիւնը, շողոքորթութիւնը: Դուք եւ գալիս անսահմանափակ, ան-վերահսկելի իշխանութիւնը. «Ինչ կ'ուզեմ՝ կ'անեմ»: Դուք, օրինակ, դրա-մատուն էք բացել Երեւանի Պատմու-թեան Թանգարանի շէնքում՝ փողոց նետելով 70 հազար ցուցամուշներ եւ բոլոր աշխատակիցներին: Դուք, համ-տեսելով իշխանութիւնը, երեւակայե-ցիք, թէ իբր այն ձեզ ցմահ է տրուած, եւ մտադիր չէք հրաժարուել իշխանու-թիւնից:

Յանուն դրա դուք Սեպտեմբերի 22ի նախագահական ընտրութիւնների ժա-մանակ դիմեցիք զեղծարարութեան եւ ստի: Երբ դա չօգնեց, սկսեցիք սպառ-նալ ժողովրդին՝ Ազատութեան Զրա-պարակի հանրահաւաքի գլխավերե-ւում պտտեցնելով ռազմական օդանա-ւեր: Իսկ 1988 թ. գորբաշուխան մեքե-ւաները թռչում էին նաեւ ձեր գլխա-վերեւում: Ինչպէս դա տեղի ունեցաւ 1988 թ. Յուլիսի 5ի՝ «Ջուրքնոց» օդա-կայանի բանակային ջարդի ժամանակ, դուք այսօր ցրում էք ցուցարարներին եւ դա անում եք ոչ միայն մահակների միջոցով, դուք հրամայել էիք կրակ բացել, 59 հոգի վիրաւոր են, այդ-թուամ 2 կին: Ինչպէս դա տեղի ունե-ցաւ Թիֆլիսում 1989 թ., դուք բռնա-ւորում էք մարդկանց վտանգաւոր կա-ցիքով: Ինչպէս, այն ժամակալի, դա անում էր Գորբաչովը, դուք այնօր սահմանել էք արտակարգ դրութիւն, ռազմական բռնատիրութիւն՝ ընդդէմ արեւմտից ժողովրդի, Երեւանի լցրել էք հրասայներով եւ պատժիչներով: Դուք մոռացել էք, որ 1988 թ. տարե-վերջին Գորբաչովը ձերբակալել էր ձեզ եւ ձեր 13 զինակիցներին, իսկ ժո-ղովուրդը, չնայած սգոյ մէջ էր ահա-ւոր երկրաշարժի պատճառով, չլքեց ձեզ՝ կայանաւորներին, մարտնչեց ձեր ազատ արձակման համար եւ ստացաւ աջակցութիւն Ա. Դ. Սախարովի կող-մից գլխաւորած աշխարհի իրաւա-պաշտպաններից: Եւ առաւել քան հինգ ամիս անց համատեղ ջանքերի շնոր-հիւ՝ դուք վերադարձաւ ազատութիւնը. մի՞թէ դուք մոռացել էք դա: Իսկ ես յիշում եմ, թէ ինչպէս ձեզ բոլորիդ ձեռքերի վրայ դուրս բերեցին բանտից, ինչպէս կէս գիշերին գրեթէ ամբողջ Երեւանը եկաւ Մատենադարանի մօտ, որ ողջունի ձեզ: Եւ այսօր դուք լան-դրգնեցիք կրակել այդ ժողովրդի վրայ, գորբաշուխան մարդաորս սանձազեր-ծեցիք ընդդէմ ընդդիմութիւն (բայց ոչ թշնամի) դարձած ձեր նախկին զի-նակիցների, ընդդէմ բոլորի, ով ազնիւ է, ով չի կոտորում, ով բողոքում է ահաբեկչութեան դէմ, պաշտպանում է ժողովրդավարութիւնը, մարդու եւ ազգի իրաւունքները: Զեր մամակա-տարները փնտռում են այդ մարդկանց, բռնում են, նետում բանտերը եւ այն-տեղ սատիսֆաքար խոշտանգում, ձե-ծուլադրի ենթարկում, ինչպէս Կեսթա-փոյի զննաններում: Ամօ՛ք ձեզ, Տէր Պետրոսեան:

Բռնութիւն կիրառեք ոչ թէ ընդդէմ ժողովուրդի, այլ՝ ընդդէմ սեփական չարութեան, աւտուրեան, դաժանու-րեան: Ձեզ էք ձեր մէջ կի-սագագանային բնագոյնե-րը: Զէ՛ որ դուք պատկա-նում էք մտածողների, գիտնականների զասին, նոյնիսկ բանասիրական գիտութիւնների ղոխտորի կոչում ունեք:

Անսացէ՛ք բանականու-թեան ձայնին, սբափուե-ցէ՛ք:

ԻՆԵՍԱ ԲՈՒՐԿՈՎԱ

ԵՒՐՈՒՈՐՀՈՒՐԴԸ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ Է ՓԱՍՏԵՐԸ

Ստորեւ տրուած տեղեկագրական յօդուածը ման-րամասնօրէն կը ներկայացնէ, Եւրոխորհուրդի ներ-կայացուցիչներուն մամուլը ատլոյիսին, որուն յուրը տրուած է ինք նախապէս:

Այս օրերին Հայաստանում է գտնուած Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից գոր-ծուողուած մի պատուիրակութիւն, որը մեր հանրապե-տութիւն է ժամանել փաստահաւաք առաքելութեամբ: Արդիւնքում պէտք է կազմուի մի փաստութեւրթ, որի քննարկումը վեհաժողովում տեղի կ'ունենայ Նոյեմբեր-րի 6 - 7ին: Մինչ այդ, Եւրոխորհրդի պատուիրակու-թեան ներկայացուցիչները կը հանդիպեն նաեւ Հայաս-տանի նախագահական ընտրութիւններում Ե. Ա. Գ. Կ. դի-տորդական պատուիրակութեան խմբերի ղեկավար Սա-յմոն Օգլոնիին հետ՝ այդպիսով ամրողջացնելով իրենց գեկույցը:

Եւրոխորհրդի պատուիրակութեան անդամները, հանդիպումներ ունենալով Լեւոն Տէր Պետրոսեանի, Վազգէն Մանուկեանի, Բարգէն Արարեցեանի հետ, ա-յցելել են նաեւ Ա. Ժ. փոխ խոսնակ Արա Սահակեանին եւ Ա. Ա. Ն. քննչական մեկուսարանում գտնուող Դաւիթ Վարդանեանին ու Ռուբէն Յակոբեանին: Նրանք եղել են նաեւ Նուպարաշէնի քննչական մեկուսարանում ու գրուցել կ'իմ Բալայեանի հետ: Նշենք, որ Վ. Մանուկեա-նի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ ներկայ է եղել Շաւարշ Քոչարեանը: Իրենց առաքելութիւնը եւ-րոպական վեհաժողովի ներկայացուցիչները եզրափա-կեցին Ա. Ժ. -ում՝ հանդիպելով հայաստանեան լրագրող-ներին: Պատուիրակութեան մէջ ընդգրկուած էին Հո-լանտայի ներկայացուցիչները՝ Ընկերակարական կուսակ-ցութիւնից՝ պրո. Վոյտփէրը եւ Ազատական կուսակցու-թիւնից՝ տիկին Կերտպելպում - Լանկիտուլթը, ինչպէս նաեւ՝ գերմանացի խորհրդարանական պրո. Տիւլֆոթը:

Սկսելով գրույցը՝ պատուիրակութեան ղեկավար պրո. Վոյտփէրը ասաց, որ Հայաստանն այժմ Եւրոխորհր-դում հանդէս է գալիս յատուկ հրաւիրելի կարգավի-ճակով եւ դիմել է կազմակերպութեան լիիրաւ անդամ դառնալու խնդրանքով: Սակայն իրենց այցը միանգա-մայն այլ խնդիրներ է չօշափում, եւ այս անգամ մի-ջանկեալ մի հաշուետուութիւն է ներկայացուցելու բա-ցառապէս սեպտեմբերեան իրադարձութիւններին վերա-բերեալ: Այդ չրջանակում առաւելապէս նախընտրելի է նկատուած Հայաստանում ժողովրդավարութեան, մար-դու իրաւունքների պաշտպանութեան, իրաւական պե-տութեան եւ մամուլի ազատութեան վերաբերող տե-ղեկատուութիւնը: ա-յց Սախարովի հետ:

Տիկին Կերտպելպում - Լանկիտուլթի ներածական խոս-քը իրաւականին կարճ էր: Նա նախընտրեց անմիջապէս խօսքուցորոյցի բունուել, փոխադարձաբար տեղեկու-թիւններ փոխանակել, սակայն մինչ այդ յայտարարեց, որ ժողովրդավարութեան չաւարտուած, շարունակա-կան գործընթաց է: Ի մասնաւորի նա մատնանչեց Հո-լանտայի օրինակը, որը թէպէտ ժողովրդավարութեան երկար ճանապարհ է անցել, սակայն այնտեղ էլ այդ գործընթացն աւարտուած չէ:

Եւրոխորհրդի պատուիրակներին ուղղուած առաջին հարցը վերաբերում էր Այպանիայի եւ Հայաստանի ընտ-րութիւններին նմանութիւններին: Կպատասխանատուեց, որ դրանք տարբեր ընտրութիւններ են: Այպանիայում տեղի են ունեցել խորհրդարանական, իսկ Հայաս-տանում՝ նախագահական ընտրութիւններ, որոնք հա-մեծատեղի չեն: Բացի այդ, Եւրոխորհրդի այս պատու-րակութիւնը ոչ թէ՛ դիտորդական, այլ փաստահաւաք առաքելութիւն ունի, այդ պատճառով էլ գնահատու-կաններ չեն տրուի: Եւրոխորհրդը նոյնպէս հրաւիր-ւած է եղել դիտորդական առաքելութեամբ ներկայ լի-նել Հ. Հ. նախագահական ընտրութիւններին, սակայն իր անհաւար է նկատուել, քանզի հայաստանեան ընտ-րութիւններին յաջող օրն իսկ սկսուել է Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստը: Այնուամենայնիւ որոշակի գնահատականներ տրուե-ցին: Տեղեկացնելով, որ իրենք ծանօթ են սեպտեմբերե-ան իրադարձութիւններին ամբողջ ժամանակագրու-թեանը, որի վերաբերեալ տարբեր մեկնարկներով իւն-ներ ու կարծիքներ են ունկնդրել, նրանք, այնուամե-նայնիւ, արձանագրեցին, որ խորհրդարանի պատգա-մաւորների կայանուած լինելը բոլոր ղէպերում ժո-ղովրդավարութեան արտայայտութիւնն է: Իրենց կազ-մակերպութեանը մտահոգել են հայաստանեան ընտ-րութիւնների վերաբերեալ հրապարակուող լրագրա-րային գեկուցումները, այդ պատճառով էլ Հայաստան է ժամանել համապատասխան պատուիրակութիւն:

Խօսելով ընդդիմութեան ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպումների մասին՝ տիկին Լանկ-իտուլթ տեղեկացրեց, որ պրո. Վ. Մանուկեանի հետ քնն-նարկել է ընտրութիւնների արդիւնքները բողոքարկե-լու հնարաւորութիւնը, ինչպէս նաեւ՝ իրադրութիւնը կայունացնելու վերաբերող հարցեր: Լրագրողների հետ կիսելով հանդիպումների արդիւնքում իրենց ստացած տպաւորութիւնները՝ Եւրոխորհրդի պատուիրակները փաստեցին, որ այս պահին նուազ հաւանական են հա-մարում Լ. Տէր Պետրոսեանի եւ Վ. Մանուկեանի միջեւ երկխօսութեան հնարաւորութիւնը:

Քննարկումներ են տեղի ունեցել նաեւ Հայկոմկուսի առաջնորդ Սերգէյ Պատալեանի հետ:

Առաջ քաշուեց նաեւ մի այսպիսի հարցադրում. ինչ-պիսի առաջարկութիւններով հանդէս կը գալ Եւրո-խորհրդը, եթէ նրան անդամակցող երկրներից մէ-կում վիճարկելի լինի իշխանութիւնների օրինականու-թիւնը: Թէեւ սկզբում տրուեց խուսափողական պա-տասխան, սակայն նշուեց նաեւ, որ անմիջապէս երկխո-սութիւն կը սկսուի տուեալ երկրի եւ Եւրոխորհրդի միջեւ, որովհետեւ նրան անդամակցող բոլոր պետու-

թիւնները պարտաւորուած են ապահովել մարդու իրա-ւունքների, մամուլի ազատութեան, ժողովրդավարու-թեան եւ իրաւական պետութեան բոլոր երաշխիքները: Թուսաստանի Դաշնութիւնը, որը նոյնպէս Եւրոխորհր-դի անդամ է, կազմակերպութեանը անդամակցելուց առաջ խոստացել էր զաղարեցնել պատերազմը Չեչենիա-յում: Սակայն երբ դա տեղի չունեցաւ, Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովում քննարկումներ սկսուեցին Թուսաստանին քուէարկելու իրաւունքից պրկելու վերաբերեալ:

